

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական
համալսարանի ռեկտոր ՊՐՈՖ. ԵՍՈՐ ՍՐԲՈՒՀԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ



26-ը նոյեմբերի, 2024թ.

Կարծիք

Անի Պետրոս-Բարցումիանի «Գրական միաստիֆիկացիա. հիմնախնդիրները և
մարմնավորումը ռուսական սիմվոլիզմի գրականության մեջ»
թեմայով, ներկայացված Ժ.01.04- «Գրականության տեսություն» մասնագիտությամբ
բանասիրական թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության
մասին

Անի Պետրոս-Բարցումիանի ատենախոսությունը նվիրված է գրական
միաստիֆիկացիա հասկացության, նրա տիպաբանության և
առանձնահատկությունների բացահայտմանը: Մինչ օրս մնում են վիճելի կամ
լիովին չուսումնասիրված այնպիսի հարցեր, ինչպիսին են «գրական
միաստիֆիկացիա» հասկացության սահմանները, գրականության տեսության մեջ
գրական միաստիֆիկացիայի տեղը, ռուս սիմվոլիստների գրական
միաստիֆիկացիաների համապարփակ բնութագրումը: Այս ամենով
պայմանավորվում է տվյալ հետազոտության արդիականությունը:

Ատենախոսության առարկան է՝ գրական միաստիֆիկացիաները ռուսական
սիմվոլիզմում, Ե. Դմիտրիևայի - Յու. Ծուցկու, Սամուիլ Կիսինի գրական
միաստիֆիկացիաները:

Աշխատանքի գիտական նորույթը: Պետրոս-Բարցումիանի
հետազոտությունում հստակեցվում է «միաստիֆիկացիա» տերմինը, ներկայացվում է
գրական միաստիֆիկացիաների տիպաբանությունը, անդրադարձ է կատարվում
«կեղծիք», «գրագողություն», «կեղծանունություն», «ոճավորում», «պարոդիա»,
«ֆիկցիա» հարակից հասկացություններին, սահմանվում են Ե. Դմիտրիևայի - Յու.

Շուրջ կու պսևդոթարգմանության և Սամուիլ Կիսինի գրական միաստիֆիկացիանների առանձնահատկությունները:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացություններից, հավելվածից և օգտագործված գրականության ցանկից: Ատենախոսության տեքստը շարադրված է 163 էջի վրա՝ ներառյալ օգտագործված գրականության ցանկը:

Հեղինակի հրապարակումները արտացոլում են ատենախոսության բովանդակությունը:

Ներածությունում կարևորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել է հետազոտության ուսումնասիրվածության աստիճանը, ձևակերպվել են նպատակն ու խնդիրները, գիտական նորույթը, հետազոտության տեսական և գործնական նշանակությունը:

Առաջին գլխում /«Գրական միաստիֆիկացիան գրականության տեսության համատեքստում»/, որը ներառում է վեց ենթագլուխ, քննվում են «գրական միաստիֆիկացիա» հասկացության սահմանները, պարզաբանվում է «միաստիֆիկացիա» տերմինը: Անի Պետրոս-Բարցումիանը տարանջատում է «միաստիֆիկացիա», «կեղծանունություն», «կեղծիք», «գրագողություն», «նմանակում», «ծաղրանմանակում» և «ոճավորում» հասկացությունները և դասակարգում միաստիֆիկացիաները:

Երկրորդ գլուխը /«Գրական միաստիֆիկացիան ռուսական սիմվոլիզմի գրականության մեջ»/ բաղկացած է վեց ենթագլխից: Այստեղ ուսումնասիրվում է գրական միաստիֆիկացիան՝ որպես երևույթ, և գեղարվեստական հնարքի դերը ռուս սիմվոլիստների ստեղծագործությունների մեջ: Այս գլուխը աչքի է ընկնում մանրակրկիտ գրականագիտական վերլուծությամբ:

Եզրակացություններ բաժնում ներկայացված են ատենախոսության հիմնական արդյունքներն և եզրահանգումները:

Ատենախոսի կատարած ուսումնասիրությունը հաստատում է նրա հասուն գիտական գործունեություն ծավալելու ունակությունը, կոնկրետ փաստերի,

տվյալների ու սկզբնաղբյուրների հետ աշխատելու կարողությունը, մեծածավալ գրականության վերլուծության հմտություններին տիրապետելը:

Ամփոփելով, նշենք, որ Անի Պետրս-Բարցումիանի ատենախոսությունը լուրջ գիտական ուսումնասիրություն է, որը կարևոր նշանակություն ունի տարբեր բնագավառներում աշխատող գրականագետների համար:

Աշխատանքն առավել կատարյալ տեսնելու ցանկությամբ ներկայացնենք մի քանի դիտարկումներ:


- Երկրորդ գլխի “Կենսաստեղծում” բաժինը լի է մեջբերումներով /տե՛ս 84, 85, 86, 89 էջերը/, ցանկալի կլիներ տեսնել նաև հետազոտողի եզրակացությունները:
- Կարծում ենք, որ ուսումնասիրության ընդհանուր լեզվական կառուցվածքը չխախտելու համար նպատակահարմար կլիներ ռուսերեն թարգմանությամբ մեջբերել անգլերեն և հայերեն քաղվածքները, իսկ դրանց բնագրերը տալ փակագծերում /տե՛ս 13,14, 20, 43, 52 էջերը/:
- Կան տարբերություններ հետազոտության “նյութի” ներկայացման մեջ ատենախոսությունում /էջ 10-15/ և սեղմագրում / էջ 5/:
- Աշխատանքում կան որոշ վրիպակներ /տե՛ս 44, 76, 82, 84, 115 էջերը/:
- Ոչ բոլոր բնաստեղծություններն են ուղեկցվում հղումով /տե՛ս 77, 111, 112, 133 էջերը/:
- Գրականության ցանկում կան աղբյուրներ, որոնք արտացոլված չեն հետազոտության մեջ /տե՛ս № 24, 28, 37, 42, 79, 83, 87, 93, 113, 123, 125, 153, 170, 161, 184, 225, 227/, և հակառակը՝ տեքստում նշված հղումները /էջ 30 - №28, էջ 115- №53, էջ 127- №55/ բացակայում են գրականության ցանկում:
Գրականության ցանկում հանդիպում են համընկնող աղբյուրներ՝ 96 և 97 :

Վերը նշվածն ամենևին չի նվազեցնում Ա. Պետրս-Բարցումիանի կատարած ուսումնասիրության արժանիքները: Ատենախոսությունը աչքի է ընկնում գիտական հստակությամբ, նորույթի հիմնավորվածությամբ, եզրակացությունների ճշգրտությամբ:


Ատենախոսությունը բավարարում է ՀՀ ԲԿԳԿ-ի՝ բանասիրական գիտությունների թեկնածուի աստիճանի հայցման համար ներկայացվող պահանջները, և ատենախոս Անի Պետրո-Բարցումիանը արժանի է Ժ.01.04-«Գրականության տեսություն» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Ատենախոսությունը քննարկվել է և վերջինիս վերաբերյալ եզրակացությունը հաստատվել է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Արտասահմանյան գրականության ամբիոնի 2024 թվականի նոյեմբերի 26-ի թիվ 6 նիստում՝ բ.գ.դ, պրոֆեսոր Ռ. Թադևոսյանի, բ.գ.թ., դոցենտ Ի. Սարկիսյանի, բ.գ.թ., դոցենտ Ք.Բեջանյանի, բ.գ.թ., դոցենտ Ա.Ամիրխանյանի, բ.գ.թ., դոցենտ Կ.Խանյանի, բ.գ.թ., պրոֆ.պ. Ս. Նուրալովայի մասնակցությամբ:

Արտասահմանյան գրականության ամբիոնի վարիչ
բ.գ.դ., պրոֆեսոր ՌՈՒԶԱՆ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ



Ռուզան Թադևոսյանի ստորագրությունը հաստատում եմ՝



ՀՊՄՀ գիտական քարտուղար, մ. գ. թ., դոցենտ ՄԱՐԻԱՄ ԻՍՊԻՐՅԱՆ

26-ը նոյեմբերի, 2024թ.